

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՄԱՍՆԵՐԻ ՎՐԱ

Նախարարական

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, տղիղողիայի և
իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Ժամանակակից հասարակույթունն առանձնանում է տեխնոլոգիական բարձր մակարդակով և դրա անհերթի ազդեցությամբ: Այդ տեխնոլոգիական բազմազանության մեջ իր վիճակարի տեղն ունի համացանցը, որն առավել մեծ ազդեցություն ունի երիտասարդ սերնդի վրա և դարձել է հաղորդակցության հիմնական միջոց:

Համացանցի շնորհիվ արմատապես փոխվել են մարդկանց ապրելու, շփման, առվորելու, աշխատելու և հանգստանալու կերպն ու հնարավորությունները: Այդ փոփխություններն իրենց ազդեցությունն են թողել մի շարք ոլորտների վրա, որոնք իրենց մեջ ներառում են տեղեկատվական անսպառ նյութեր, զանգվածային լրատվամիջոցներ, եղանակի կանխատեսում, կապի արագ և էժան միջոցներ, բանկային ծառայություն, առցանց առևտուր և բիզնես, թվային գրադարաններ և թանգարաններ, երաժշտություն, առցանց խաղեր և ժամանց, առողջապահություն, կառավարում, առջիալական ցանցեր և այլ ոլորտներ:

Համացանցի միջոցով իրականացվող հաղորդակցական՝ գործունեությունը բազմազան է: Համացանցային մեծ աշխարհից հարկ է առանձնացնել սոցիալական ցանցերը: Սոցիալական ցանցերի գործարկման սկիզբը կարելի է համարել 1995 թ. ստեղծված Classmates.com¹ կայքը, որի օրինակով հետազոտում բացվեցին բազմաթիվ սոցցանցեր: Վերջիններիս պահանջարկն աճեց հատկապես 2004-2005թթ., երբ ստեղծվեցին LinkedIn-ը, Facebook-ը և MySpace-ը: Սուածինը նախատեսված է գործնական հարաբերությունների շրջանակներում շփման համար, իսկ Facebook-ն ու MySpace-ը բաց սոցիալական ցանցեր են, որոնք հասանելի են ցանկացած օգտատիրոջը²:

¹ <http://www.classmates.com/>

² Մենեմշյան Ա., Սարգսյան Զ., Մտեփակյան Վ., Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները կեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ (ուսումնաժողովական ձևականությունների պահպանի համար) - Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 35:

Սոցիալական ցանցերը վեր կայքերի տեսակ են, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել համացանցային համայնքներ, որտեղ կարող են հավաքվել միանման հետաքրքրություններ ունեցող կամ միևնույն բնագավառը ներկայացնող մարդիկ³: Սոցիալական ցանցերի անընդհատ աճող թիվը վկայում է բազմաթիվ գրավչությունների մասին:

Ուսումնասիրելով սոցիալական ցանցերի հիմնական գործառույթները հետազոտողներն առանձնացրել են դրանցից ամենակարևորները⁴:

• **Հաղորդակցական գործառույթ**, որն ինչպես հայտնի է մեծ տեղ է գրադեցնում մարդու կյանքում: Մարդիկ սոցիալական բնույթ ունեն, և առանց հաղորդակցության, անհնար է դառնալ հասարակության լիիրավ անդամ:

• **Տեղեկատվական գործառույթ**, որը համահավասար է առաջին գործառույթին: Հանդիսանում է կապի հիմնական բաղադրիչներից մեկը: Միևնույն ժամանակ, հաղորդակցման մասնակիցները հերթականությամբ հանդիս են զայխ հաղորդակցման դերում, ապա ստացողի դերում: Այս պարագայում նպաստակահարմար է ասել, որ տեղեկատվական հոսքը միակողմանի կողմնորոշում ունի:

• **Սոցիալականացման գործառույթ**, անհերքելի է այն փաստը, որ սոցիալական ցանցերն այսօր ամբողջապես նպաստում են երիտասարդ սերնդի հասարակայնացմանը:

• **Լույսականացման գործառույթ**, սոցիալական «ես»-ը ձևավորվում է նոյնականացման միջոցով, շրջապատի հետ համեմատությամբ և ռեֆերենտ խմբի ընտրությամբ:

• **Ժամանցային գործառույթ**: Հայտնի է, որ սոցիալական ցանցերը մեծ ներուժ ունեն զվարճանքի ոլորտում: Կա մեծ թվով առողջի և վիճելու ձայնագրություններ, օնլայն խաղեր և բազմաթիվ ծրագրեր, որոնք զվարճալի են:

• **Սոցիալական ցանցերի հաջորդ կարևոր գործառույթը համարվում է ինքնանդացման գործառույթը**: Սա լոռուի բուրգի համաձայն անհատի ամենաբարձր պահանջմունքների մեջ մտնում է ինքնանդացումը⁵:

³ <http://vardenik2.schoolsite.am>

⁴ Садыгова Т.С., Социально-психологические функции социальных сетей, М., №3(10), 2012, с.192-194.

⁵ Там же.

Սոցիալական ցանցերը համարվում են տարածքներ, որտեղ օգտատերերն իրենց կարծիքներն ու զաղափարները կիսում են ուրիշների հետ: Տարբեր տարիքի, սեռի, էթնոսի, կրթության և մշակութային մակարդակներով մարդիկ, ըստ իրենց նպատակների, նախասիրությունների ու պահանջների ներգրավվում են սոցիալական ցանցեր, ստեղծում կամ վերատարածում են մեծ ծավալի նյութեր:

Սոցիալական ցանցերն առաջ են բերել մի շարք փոփոխություններ մարդկանց կենսակերպի մեջ: Ժամանակակից մարդն իրական շփումը նախընտրում է փոխարինել ինտերնետային վիրտուալ շփմամբ, որն էլ ավտոմատ կերպով տանում է իրական սոցիալական հարաբերություններից դրւամդման: Սոցիալական ցանցերի պատճառով աշխարհի տարբեր երկներում, այդ թվում նաև Հայաստանում, զգալիորեն աճել են համացանցային ամուսնությունների, ամուսնալուծությունների, ընտանեկան կոնֆլիկտների, ընտանիքի փլուզման դեպքերը⁶:

Սոցիալական ցանցերը ներգրածուն ազդեցություն ունեն հատկապես դեռահասների շրջանում և մեծապես նպաստում են նրանց՝ որպես անձի ձևավորմանը: Սոցիալական ցանց - դեռահաս հարաբերությունները կարենոր են երկու տեսանկյունից. առաջին՝ սոցիալական ցանցն այսօր դեռահասի համար ինքնարտահայտման հարթակ է, որտեղ վերջինս կառուցում է սոցիալական հարաբերություններ միևնույն հետաքրքրություններ ունեցողների հետ⁷: Սա հատկապես կարենոր է, եթե դեռահասն ունի բարդույթներ, որոնք խանգարում են նրան արտահայտվելու և ազատ շփվելու առօրյայում:

Դեռահասության տարիքը մարդու կյանքի այն շրջանն է, որն ընդգրկում է 11-12-ից մինչև 14-15 տարեկանները⁸: Այս շրջանում անցում է կատարվում մանկությունից դեպի պատանեկություն: Գրականությունից հայտնի է, որ դեռահասության ճգնաժամը կարենրվում է երկու հանգամանքով՝ սեռական հասունացման գործընթաց և ինքնազիտակցության նոր դրսերումների արթնացում: Ժան Շակ Ռուսան դեռահասությունը դիտում է որպես

⁶ http://www.ache.am/index.php?option=com_content&view=article&id=25:library-family1&catid=17:articles-hy&lang=hy&Itemid=147

⁷ http://www.medicinform.net/psycho/psych_pop13.htm

⁸ <https://hy.wikipedia.org/wiki/Դեռահասություն>

ինքնազիտակցության աճի, անձնավորության ծննդի շրջան⁹: Գերմանացի հոգեբան Շ. Բյուլերը դեռահասության ճգնաժամի պատճառը սեռական հասունության գործընթացն է համարում¹⁰: Նա դեռահասության փուլում առանձնացնում է նեգատիվ և պոզիտիվ շրջաններ: Նեգատիվ շրջանի հիմնական բնութագիրը նախկին հետաքրքրությունների մահցումն է, իսկ պոզիտիվ շրջանինը նոր հետաքրքրությունների, արժենների ի հայտ զալը, դեռահասը ձգուում է մտերմիկ հարաբերությունների: Այս բնագավառում անցկացված ուսումնասիրությունների արդյունքները խոսում են այն մասին, որ համացանցից օգտվողների հիմնական խնդիրները կենտրոնանում են ինքնորոշման ոլորտի վրա¹¹: Ինչպես հայտնի է, դեռահասներն ունեն ինքնարտահայտման, սերտ կապեր հաստատելու, ինչպես նաև սեփական ֆիզիկական «Ես»-ի ընդունման հետ կապված խնդիրներ: Այս երևույթի անմիջական հնարավոր պատճառն են համարվում ինքնազնահատականի թերզարգացած և ինֆանտիլ մեխանիզմները, որոնք առաջացնում են իդեալիստական պահանջներ և կանխում են իր մասին տարրերակված ու համապատասխան պատկերացումների ձևավորումը: Նշենք նաև, որ որոշ դեռահասների համար համացանցի նկատմամբ չափազանց հակածությունը կարող է հանգեցնել մարդկային հարաբերություններում վերահսկողության կիրառմանը, որը կարող է դեռահասին մղել սոցիալական օտարման: Դեռահասության տարիքում անհատը մուտք է գործում որակապես նոր սոցիալական դերակատարության մեջ, որի ժամանակ ձևավորվում է նրա զիտակցական վերաբերմունքն ինքն իր նկատմամբ, որպես հասարակության անդամի: Կախված նրանից, թե ինչպես կընթանա այդ ընթացքում սոցիալական կողմնորոշվածությունը պայմանավորված է մարդու սոցիալական դիրքորոշումների ձևավորումից: Դեռահասության շրջանի համար բնորոշ է գործունեության այն տեսակը, որն ուղղված է փոխհարաբերությունների նորմերի յուրացմանը, մասնավորապես հասակակիցների հետ: Գրանցվելով սոցցանցում կամ բացելով անձնական բող՝ նա սկսում է շփմել ընկերների հետ կամ գոտնել իր նման մարդկանց, ովքեր ունեն նման մտածելակերպ և հետաքրքրություններ:

⁹ Социально-психологические аспекты интернет-зависимости , В.А. Бурова, <http://user.lvs.ru/vita/doctad.htm>

¹⁰ Խուլդրան Ս., «Դմվար տարիք» կամ դեռահասության ճգնաժամ, Առողջապահություն, Եր., 2010 (286), էջ 1-3:

¹¹ Նույն տեղում:

Սոցցանցերը նախնառաջ հնարավորություն են տալիս նաև մշտապես կապի մեջ մնալու բարեկամների և ընկերների հետ՝ անկախ նրանց գոտնվելու վայրից: Սոցցանցերը և բլոգները սոցիալականացման հրաշալի միջոց են. դրանց միջոցով դեռահասն արձագանքում է իր շուրջը կատարվող իրադարձություններին, արտահայտում է իր կարծիքն այս կամ այն հարցի շուրջ: Դեռահասի վարը համացանցում քննելու արդյունքում կարելի է պատկերացում կազմել նրա մտածելակերպի, նրան հուզող խնդիրների մասին: Սոցցանցերը դեռահասին հնարավորություն են ընձեռում անձնական հաշվների միջոցով արտահայտելու իրենց մտքերը, գաղափարները, ներկայացնելու գործունեությունը, և դրանք ուսումնասիրելով՝ կարելի է պատկերացում կազմել օգտատերերի մասին¹²:

Բացասական ազրեցություններից կարելի է նշել համակարգչային կախվածությունը, ընկճվածությունը, ամաշկութությունը, մեկուսացումն ու հասարակական շրջանակներից հեռու մնալու պահվածքը և ինքնավատակության նվազումը: Մեր ժամանակներում երեխանների շրջանում համակարգչային կախվածությանը վերաբերող հարցերը դառնում են ել ավելի արդիական, քանի որ ավելացել է այն թվային սարքերի քանակը՝ համակարգիչներ, պլանշետներ, սմարտֆոններ և այլն, որոնք նպաստում են երեխանների մոտ համակարգչային և ինտերնետային կախվածության առաջացմանը: Նմանատիպ հաղորդակցությունն ընդունակ է ամբողջովին կլանել սուրբեկտին, չթողնելով նրան ժամանակ և ուժ այլ գործունեությամբ զբաղվելու համար: Այդ կախվածությունը կարող է կապված լինել ոչ միայն համացանցում հաղորդակցական գործունեության հետ, այլ նաև համացանցում կեկտրոնային գնումների և մոլի խաղերի նկատմամբ կախվածության:

Հետազոտողներն առանձնացնում են դեռահասների՝ սոցիալական ցանցերից կախվածության տարաբնույթ չափորոշիչներ: Ամերիկացի հոգեբան U. Օրզակն առանձնացնում է այդ կախվածությանը բնորոշ մի շարք հոգեբանական և ֆիզիկական ախտանիշներ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ¹³:

Հոգեբանական ախտանիշներն են.

¹² Магомедова С.З., Влияние социальных сетей, Международный научно-исследовательский журнал, Выпуск Июнь 2013, <https://research-journal.org/economical/vliyanie-socialnyx-setej/>

¹³ Кузнецова Ю.М., Чудова Н. В., Психология жителей Интернета, М., Изд. ЛКИ, 2008, с. 77-79.

- Համակարգչի առջև գտնվելու ժամանակ լավ ինքնազգացողություն և կֆորհայի վիճակ,
 - Դադարեցնելու անկարողություն,
 - Համակարգչի մոտ անցկացվող ժամանակի պարբերական ավելացում,
 - Ընկերներին և ընտանիքի անդամներին արհամարհում,
 - Համակարգչից հեռու գտնվելու դեպքում զայրույթի և դատարկության զգացում,
 - Ստախոսություն,
 - Ուսուցման կամ աշխատանքի հետ կապված խնդիրներ:
- Ցիզիկական ախտանիշներն են.**
- Ականային լարվածություն,
 - աշքերի մեջ չորության զգացում,
 - զլխացավ,
 - թիկունքի մասում ցավի զգացում,
 - անկանոն սննդակարգ,
 - անձնական հիգիենայից շեղում,
 - քնի խանգարում:

Դեռահասների շրջանում արված մի շարք հետազոտություններ փաստում են այն մասին, որ սոցիալական ցանցերից կախվածությունը հնարավոր է կանխարգելել հետևյալ քայլերի միջոցով¹⁴.

- Հսկել այն ժամանակի տևողությունը, որ երեխան անցկացնում է համակարգչի և թվային տեխնոլոգիաների առջև,
- Նպաստել երեխաների հետաքրքրությունների և ընդունակությունների զարգացմանը,
- Համակարգիչներից և թվային տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելով՝ օրինակ ծառայել երեխաների համար,
- Հսկել այն խաղերը և ինտերնետային կայքերը, որոնցից օգտվում են երեխաները,
- Անհրաժեշտության դեպքում դիմել հոգեբանի:

Դեռահասության շրջանում համացանցային կախվածությունը հանգեցնում է իրական կյանքում հաղորդակցման հետ կապված դժվարությունների առաջացմանը: Դրանք դրսևորվում են

¹⁴ Кузнецова Ю.М., Чудова Н. В., Психология жителей Интернета, М., Издательство ЛКИ, 2008, с. 77-79.

հաղորդակցման հուզական բաղադրիչի խանգարման, զրուցակցի հուզական վիճակի ընկալման և հաղորդակցման ոչ վերբալ կողմերի ընդունակության նվազեցման ձևով:

Սոցիալական ցանցերի դերի և նշանակության մասին խոսելիս ի վերջո հանգում ենք այն եզրակացության, որ դրանք ունեն և՝ դրական, և՝ բացասական կողմեր: Կշեռքի նժարի վրա դնելով նրա դրական և բացասական կողմերը միաժամանակ՝ զայխ ենք այն մտահանգման, որ գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացման ժամանակաշրջանում հնարավոր չէ պատկերացնել կյանքն առանց սոցիալական ցանցի, քանի որ նրա տված ինֆորմացիան և գիտելիքներն առավել են հարուստ գրադարանից, մյուս կողմից էլ տարբելով այդ ինֆորմացիայի մեծ հոսքով՝ ունենում ենք ժամանակի մեծ կորուստ և իրական շփման քաղց: Խնդրի ամենախելամիտ և ճիշտ լուծումը հետևյալն է՝ օգտվել դրանցից՝ շանտեսելով և շմորանալով մեր հարազատների և մտերիմների հետ ուալ շփումը, իսկ սոցիալական ցանցերը և, առհասարակ, համացանցն օգտագործել որպես ինֆորմացիայի մեծ հանրագիտարան: Դարձնենք համացանցը մեր ծառան՝ հնարավորինս շատ՝ «աշխատեցնելով» և ինֆորմացիա կորզելով նրանից, այլ ոչ թե մենք դառնանք նրա գերին՝ անմոռաց զամվելով նրա առջև:

ԱՍՓՈՓՈՒՄ

Այսօր ամբողջ աշխարհում սոցիալական ցանցերը դարձել են մարդկանց կյանքի բնականոն գործունեության անբաժանելի մասը: Սոցիալական ցանցերի օգտատերերի քանակը գերարազ աճում է՝ թողնելով դրական և բացասական ազդեցություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների այս շրջանում ցանկացած նորամուծություն ավելի դյուրին է դարձնում մարդկանց գործունեությունը: Սոցիալական ցանցերից օգտվողներից յուրաքանչյուրին էլ (հատկապես դեռահասներին) հարկավոր է կամքի ուժ կախվածություն չունենալու համար և ինֆորմացիան իրենց նպատակին ծառայեցնելու կարողություն:

Բանալի բառեր. համացանց, սոցիալական ցանց, դեռահաս, համացանցային կախվածություն:

ВЛИЯНИЕ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ НА ПОДРОСТКОВ

Наира Сафарян

младший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Сегодня социальные сети во всем мире стали неотъемлемой частью нормального функционирования жизни людей. Количество пользователей социальных сетей стремительно растет, одновременно возрастают и их положительные и отрицательные воздействия. Любое новшество в области информационных технологий облегчает деятельность людей. Каждому из пользователей социальных сетей (особенно подросткам) необходимо обладать силой воли, чтобы не впасть в зависимость и использовать информацию для достижения своих целей.

Ключевые слова: Интернет, социальные сети, подросток, интернет-зависимость.

INFLUENCE OF SOCIAL NETS ON TEENAGERS

Naira Safaryan

*Junior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Today the social networks became an integral part of normal functioning of people's life. The number of users of social networks promptly grows, and simultaneously are increasing they positive and negative influences. Any innovation in the field of information technologies facilitates activity of people. It is necessary for each of social networks user (especially or teenagers) to have a strong will power, not to fall into the dependence and to use the information for achievement of own goals.

Key words: Internet, social networks, teenager, internet dependence.